



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻՒ 41


ՀԱՐԱՐ

9 ՅՈՒՆԻՍ 1907

Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ

Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ

Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ



Ձ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոսոլէի դիսարանին. 1903
ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑԱՆԱԿ. — Անդամ Ժիւռիի Միլան. 1906
ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԲ ԹՈՒՐԲՈՑ ՀԱՄԱՐ

Գ. ՄԱՐԳԻՍՏՈՅ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրջա-
ներու եւ գոհարեղէններու

ԹԻՒ 16 = ՊԱՀՃԷ-ԳԱԲՈՒ = ԹԻՒ 16

Օռոգարի-Պաք հաստատութեան գիմարը

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ. Տ. ԷՔՄԵՔՃԵԱՆ ԵՂԱՐՑ քով,
Թիւ 400 Մեծ-փողոց.


Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ Ձ Ե Ն Ի Թ

(آ. آصادوریان) شرکت سانیه مطبعه — باب عالی جاده سنده نومر: ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասցեայի թիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
էլիքագամայն մեխանիկ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՏԱՅՐԻՑ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կտարեւ լազործուածը ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

ձեռք մօտէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՊԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 . |
| ՍԵՐԻՏԱՐ | Չարը Պօյու , Թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու քոչոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , Թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզօղլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 41

ՇԱՐԱԹ

9 ՅՈՒՆԻՍ 1907

ՕԹԼԱԽՃԻՈՒԹԻԻՆԸ

Ինքը տաճկերէն բառ մ'է թէեւ, սակայն բուն իմաստը դուրս տալու համար մինչեւ հիմա հայերէն ո՛ր եւ է բացատրութիւն մը տրուած չէ անոր:

Օրլախնի բառը շատ անգամ կը գործածուի լրագրութեան մէջ, լրագրութեան՝ որ գրականութիւն ըսել է, քանի որ ան ալ գրականութեան մաս կը կազմէ և անոր մէջ կ'երեւի, կ'արտաբերուի ազգի ազգի ձեւերով, ոճերով:

Օրլախնի կ'ըսեն այն ծայրայեղ էֆօնմիսք անհատին, որ առանց ձեռքը գրպանը տանելու՝ օրուան թերթերը կամ շաբաթաթերթերը ծայրէ ի ծայր կը կարդայ, կը գոհանայ, իր բարոյական սնունդը կը ծծէ անկէ, նոյն իսկ առանց տասնոց մը վճարելու:

Ընթերցասիրութեան այս ստորին սիւթէմը, ցաւալի է ըսել որ օր օրի կ'աւելնայ մեր մէջ, կը ծաւալի:

Չպիտի կրնամ ըսել թէ նիւթական անձուկ վիճակի մը արդիւնքն է այս տեսակ հիւանդութիւնը, ախտը, ուրկէ վարակուած են կարգ մը չոր-ընթերցասէրներ, այլ պարզապէս գձուձ սովորութիւն մ'է, որ արմատացած է իւրենց բարոյական զգացումներուն մէջ, ուրկէ կը մղուին գործադրել, ամենայն անտարբերութեամբ և անպատկառ կերպով:

Այսօր մեր Հանրագիտակի թիռածը բազդատելով ընթերցողներու ահագին թիւին հետ, սա համոզումը դոյացուցած ենք որ, մեր մէն մի թիւը քսան հոգիի ձեռքէն և աչքէն կ'անցնի:

Եւ որովհետեւ ասոնց մէջ կը գտնուին անանկներ ալ՝ որոնք բարձրաձայն կը կարդան իւր ընտանեկան բազմամարդ շրջանակի մը, ուստի կրնանք ըսել թէ՝ մէկ Հանրագիտակ մը քառասուն հոգիի կը վիճակի, որ ըսել է 40 զըշ. մինչդեռ մեր ձեռքը կը հասնի . . . 40 փարայ :

Տնօրէնութիւնս կը փափաքի, ալ աւելի դիւրամատչելի պայմաններով կէս առ կէս նուազեցնել գինը մէն մի թիւին, որպէս զի ամէն դասակարգի և ամէն աստիճանի ընթերցողներ կարենան շուայել (.) այդ ոչինչ գումարը շաբաթաթերթի մը: Սակայն քաջ գիտնալով թէ՝ այդ զոհողութիւնը մեր կողմէն, պատճառ պիտի ըլլայ ալ աւելի բարձրացնել օթլախնիներու թիւը, ուստի կը գոհանանք կենալ մեր նախորդ գիներուն վրայ, ահամայ, բայց ի հարկէ ստիպեալ :

Մարդ օթլախնի ըլլալէ առաջ աներես կըլլայ, և ատոր համար է որ բնաւ չի քաշուիր նոյն իսկ թերթին տիրոջը մօտ ցրուիչէն առնել թիւ մը՝ գետինը կոկոզիկ ընել, կարդալ և ետ տալ, ինչպէս կան ալ՝ որոնք տուն ալ կը տանին, և սակայն օգուտ մը չեն ունենար և չեն առթեր բուն նպատակին, բուն իսկ տիրոջը :

Մի միայն մեր թերթին համար չենք ուզեր խօսիլ, այլ ցաւով կը յիշենք մեր բոլոր պաշտօնակիցներու վիճակած այս տխուր իրողութիւնը, նամանաւանդ օրաթերթերու վրայ խօսելով, որոնք ծաւրը վրան կը կարդացուին ու կրկին իրենց տէրօն կը վերադառնան, մինչդեռ ՏԱՍԸ փարայի պզտիկ վճարումով մը ծախուելու, քշուելու սահմանուած են անոնք, հակառակ ահագին գումարներով կազմուած ըլլալուն :

ԱՐԵՒԻԵԼՔ օրագիրը, որ այսօր առաջնակարգ դիրք մը գրաւած է Հայ մամուլին մէջ, իր նիւթերու ճոխութեան համար ըրած զոհողութիւններով, թուղթին ազնիւ տեսակը գործածելով, գիրերու միշտ նոր ու մաքուր տպագրութեամբը, հակառակ ՏԱՍԸ փարայի համեստ գնով մը հրապարակ ելլալուն, դեռ կը տեսնուին այնպիսի դժուձ էքօնօմիսթներ՝ որոնք ցրուիչներու ետեւէն կը վազեն, թերթը անգամ մը ձեռք անցնելով թարմ լուրեր քաղելու համար մէջէն, և սակայն երբ խնդիրը տասնոցին գայ, կարծես դրպաննուն մէջ թունաւոր միջատ մը ըլլայ, այնքան կը վախնան ձեռքերնին հոն տանելով դրամը վճարելու :

Օթլախնիութիւնը, համաճարակ մըն է, տարափոխիկ ախտ մը, որ կրնայ շատ գէշ հետեւանքներ ունենալ եթէ ամօթխածութիւնը ժամ առաջ իր չինիչ դերը և ազդեցութիւնը չի կատարէ իրենց վրայ :

Թերթ մը կամ Հանդէս մը թէեւ կոչում և նպատակ ունի կրթել ու մարդել ժողովուրդը գրական, կրօնական և իմաստասիրական տեսակէտներով, սակայն անոր յարատեւ և մշտնջենական շարունակութիւնը պէտք է միշտ ապահովուի ընթերցասէր ժողովուրդին կողմէ, և ոչ թէ օրէ օր կրկնապատկուող օթլախնիներու աւերիչ և ջլատիչ ընթացքով իյնայ նիւթապէս թէ բարոյապէս :

Չեմ ստիպեր որ հիմնովին վերնայ օթլախնիութիւնը, զի գիտեմ թէ մեր լրագրական հրապարակին վրայ արմատացած, ճիւղաւորած ունակութիւն մըն է այդ, բայց գոնէ պիտի խնդրեմ որ չափ ու սահման մը դնեն ամէն անոնք որոնք ի վաղուց անտի ի գործ կը դնեն այդ ստոր սովորութիւնը :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

Պոլսոյ Հայուհիներուն ինչու կարգուելէն աւելի զարմանալի, աւելի կատակերգական է ինչպէս ամուսնանալին:

Եւրոպացի աղջիկը, երբ կարգուելու կելլայ՝ նախ մէկը կը ճանչնայ, ետքը կը սիրէ զայն և վերջապէս հետը կը կարգուի:

Պոլսուհին ճիշդ հակառակն է, նախ մէկուն հետ կը կարգուի, ապա կսկսի ճանչնալ և վերջապէս կը սիրէ ... Աստուած գիտէ ի՞նչպէս:

Մեր աղջիկները հակառակ իրենց ա ժիկոթուերուն, գունաւոր սիւրաէ ճերմակեղէնին, երկտաւանեակ մը Ռաբաստիներ զարդարելուն և իրենց պիսիքէթ հեծնելու փափաքին, այնպէս կամուսնանան ճիշդ ինչպէս կամուսնանան իրենց սեւամորթ քոյրերը ի Նիամ-Նիամ և ճերմակները ... Հիւսիսային բեւեռին մէջ:

Արդի ամուսնութիւններու վրայ ակնարկ մը բաւական է զձեզ համոզելու համար թէ քսածս ամենապարզ ճշմարտութիւն մ'է:

Նորապսակ ամուսնիքը՝ ինչ դասակարգի ալ պատկանին՝ իրարու վրայ այնքան ծանօթութիւն ունին որքան մաքսի բեռնակիրները Արիօթիտ Պրիւանի վրայ և մեր Արմիկ տուտուն ... էմիլիէն տ'Ալանսօնի:

Հազար անգամ, հարիւր հազար անգամ ես ինծի հարցուցած եմ թէ մեր աղջիկները ի՞նչպէս կը տոկան այդպիսի վիճակի մը:

Մէյ մը fիմքօսօբին խելք չեմ հասցուցած, մէյ մըն ալ այդ տեսակ ամուսնութեանց:

Շատ մը օրինակներու մէջէն մէկ հատ մը:

Օրիորդ Թաթա, քսան տարու է, հազար ոսկի գրամօթիտ ունի և պիտի կարգուի:

Մինչեւ հոս ոչինչ անքնական:

Ամբողջ Պոլիս գիտէ ասիկայ:

Ամէն երիտասարդ գոնէ մտքէն անգամ մը անցուցած է խնդրել այդ աղջկան ձեռքը և մանաւանդ ... մէջինը:

Օր մը որ եւ իցէ Յակոբիկ աղա մը կամ էֆտիկ հանրմ մը աղջկան տունը կը հանդիպի:

Եթէ իր քանտիտան Պահճէ-գաբու այս քիչ խանին մէջ վաճառական մը չէ ապահո-

վապէս կամ ատամնաբոյժ է և կամ բժիշկ, կամ հինգ վեց հազար ոսկիի տէր է կամ օրը երկու ոսկիին բան չըսէր:

Օրիորդ Թաթաի ապագան այդ Յակոբիկին կամ էֆտիկին շրթներէն կախուած է: Ինչ խեղճութիւն:

Բեք աղէկ, կը նայինք, կըլլայ, ծնողացը պատասխանը:

Եւ ահա հարցափորձերը կսկսին:

Շուկան մարդ չի մնար կը հարցնեն:

— Այսինչը կը ճանչնա՞ք:

— Գէշ չէ, տարին երկու երեք հարիւր ոսկի կը վաստակի կըսեն անոնցմէ շատերը:

Տեղեկութիւնները գէշ չեն:

Օր մը երկու կառք օրիորդ Թաթայի դըրան առջեւ կանդ կառնեն:

Ֆօթօգրվ պառաւ մը, գլխարկաւոր երկու կին և սեւ հագուստով երիտասարդ մը ընդունելութեան սրահը կ'առաջնորդուին:

Թաթա՝ իրեն էն շատ վայլած արդու զարդը կը կրէ:

Կէս ժամ կը տեւէ այս աղջիկտեսի գործողութիւնը՝ որ ամէնէն տարօրինակ և ամէնէն զարմանալի սովորութիւն մ'է որ մեր մէջ կը շարունակուի դժբաղդաբար:

Ամուսնութիւնը որոշուած է:

Օրիորդը համոզուած է թէ իր ապագայ ամուսինը պիտի կրնայ մինչեւ մեռնելու օրը երկու տեսակ կերակուր, երկու ծառայ և երկու տարին անգամ մը ստնտու մը ապահովել եթէ Տէրը կամենայ:

Փեսացուն ֆիզիզական, հոգեկան, ընկերական կացութիւնը երբեք խնդրոյ նիւթ չէ եղած իրենց մէջ:

Երանելի բարքեր, որ Հայր Աբրահամը յիշեցնել կուտան:

Քանի մը ամիս նշանած կը մնան և երկուշաբթի մը հարսնիք:

Տասը տասներկու անգամ զիրար տեսած են, և այդ կարճ այցելութիւններու միջոցին պարոնը հազիւ ժամանակ ունեցած է ցուցունելու իր խօսեցեալին, երկու երեք հատ բանխալօն, Պալթազարէն գընուած կէս երկտասնեակ ֆուլպարներ երկու զոյգ ձեռնոց, և խել մը ուլիններ:

Օրիորդը իր կողմէն՝ դաշնակին վրայ սօ-
նադ մը, չորս շրջազգեստներ, և փոքր մաս
մը իր օժիտէն:

Իրենց մէջ ոչ իսկ սիրոյ կասկած մը:

Խօսակցութեան նիւթ՝ օղը, Պէօյիւք-Տէրէ,
Կղզի, այսինչին նշանաւորը, և միւսին հարս-
նիքը:

Աղէկ միտքս եկաւ, երկուքն ալ զատ
զատ իրենց լուսանկարը հանել կուտան Ֆէ-
սիւսին:

Եւ այսպէս երկուշաբթի իրիկուն իրարու
կըլլան վերջապէս:

Սո՛ւտ եմ, դուք ըսէք:

Եւ այս երկու էակները, իրենց կեանքը,
սիրտը, հոգին և մարմինը մէկ պիտի ընեն:

Ես չեմ հաւատար ասոր:

Այս երկու երիտասարդները, միասին տա-
րիներով պիտի ապրին սա ապահովութեամբ
որ միշտ էրիկը պիտի կրնայ աղէկ կերպով
անուցանել իր կինը:

Ո՛ւր ես Բանպրօն:

Ինչ որ կուզեն թող ըսեն՝ ուրիշ ազգե-
րու համար ամուսնութիւնը սրտի խնդիր է,
իսկ Պոլսոյ Հայերու համար ... ստամոքսի:

Մեր աղջիկները որքան որ աղջիկ կը մը-
նան՝ դարավերջիկ բան մը ունին, չեմ ու-
րանար, բայց կարգուելու ելլալուն պէս
անդրջրհեղեղեան էակներ են:

Ինչ անկում:

Յ. ԱԼՓԱՆԻ

Մ Ա Հ

ՅԱԿՈԲ Ծ. ՎՐԴ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Որ հօրեղբայրն էր մեր սրամիտ Ֆանթե-
գիսդ Ստեփան ԷՖ. Ստեփանեանի (Էս-Սէ),
կիմանանք քե շաբաթ գիշեր կնիք ե իր մահ-
կանացուն, եւ որուն յուղարկաւորութեան
հանդէսը կատարուեալ է Կիրակի՝ մեծ շուկայի
հանդիսաւորութեամբ, մարմինը բոս փափա-
փանաց բոլոր ֆաղափաղներուն՝ քաղուեալ է
Ասաբազարու Ս. Հրեշտակապետ եկեղեցին:

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցու-
թիւնները կը փութայ յայտնել իր Ազն. աշխա-
սակցին՝ Ստեփան ԷՖ. Ստեփանեանի եւ ամ-
բողջ պարագաներուն:

Ա՛Շ ԽԱԼՓԱՆԵՐԸ ...

Ամէն անոնց որոնք Գարակտօգեան
որբանոցի շինութեան քեկնածու են:

Կար ու չըկար, դատաւոր մը կար արդար,
Այնքան արդար, որ իր անուն դարե դար,
Պիտի յիշուէր իրաւ իրաւ արժանի
Պատուի, սիրոյ, իբրեւ ոչ մարդն argentի:
Աղջիկ մ'ունէր, որուն իբր զրամօթիս,
Կուզէ շինել սանկ սուն մ'երկ յարկ, սիրուն gite:
Դրամ ալ կար, երկու հարիւր հաս դեղին,
Ուստի կ'երթայ գտնել խալփան իր գեղին,
— «Բան մը չէ աղ, կ'ըսէ խալփան սրնամեջ,
«Ամէն ամէն հարիւր տասնին չէ իսկ մեջ,
«Տաս հազար հաս թուղա, քիչ մ'ալ փայտ ու կիր
«Ահա քեզի տուն մը երկարիկ ֆարուկիր»:
Իսկոյն կ'երթան կը սակարկեն հողն ու տեղ,
Եւ յաջորդ օր, չորս հինգ բանուր մարդ մեկտեղ,
Կը ձեռնարկեն գործի, եւ մեկ ամիսէն
Վարի յարկի պատերն ամբողջ կը հիւսեն:
Բայց եկո՛ւ, տե՛ս, դեռ չըսկըսած երկրորդ յարկ,
Դատաւորին քրտակն եղած էր դատարկ:
«Դրամ հասցուր, կ'ըսէ խալփան, միշտ փութով»
Մարդն ապշահար մնայ սրմամբ, ամօքով,
Դրամ պէտք է, հար մը պէտք է յիշաւի,
Կընդուն ամէն աղամանդներ գրաւի
Կը դրնէ բայց, այդ դրամն ալ է նըւազ,
Մեկ սենեակը կը շինուի ալ հազիւ հազ:
Նորէն պէտք է, միշտ դրամի կայ մեծ սով,
Ինչ ընէ խեղճն, ինն առ հարիւր տոկոսով,
Սըկէ նըկէ քիչ մ'ալ դրամ կառնէ փոխ:
Տունը կ'ըլլայ, ինքն ալ մեջտեղ փեշսած սոխ:
Ա՛լ կործանած, երդում կ'ընէ մէյ մըն ալ
Խալփաներու ձեռքը, ամա՛ն, չը մընալ:
Եւ, կ'ըսեն որ, շինել կուտայ մեկ սակառ,
Մեջը դրամ սողոց, ուրազ, զամ ու ֆար,
Եւ ամէն հեղ որ կը տեսնէ եղեր դատ,
Մեջ բերելով յարդէ աղտոս այդ փաւրաթ,
Կըսէ եղեր — «Կերդնուի իմ սա կողովին
Որ պիտի՝ ըսէք նըմարիսը լիովին»:
Եւ մարդիկը եղելութեանն անգիտակ
Դողով կ'ըսեն եղեր ամէն բան շիտակ:

ԸՍԵՐԴԱՆ ՕԹՈՒ

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՓՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Merci.

Շնորհակալութեան այս բանաձևը կեանքիս մէջ երկրորդ անգամը ըլլալով կատիպուհիմ գործածել:

Merci ըսի Տնօրէնին՝ այն օրը, երբ, փոխան աշխատանքիս գրականապէս կը վարձատրէր զիս, այն առաջին ամիսին, յորում սկսած էի ապրուստս հոգալ վարժուհիութեամբ:

Merci կըսեմ այսօր այն ազնիւ Պարոնին, որ Հանրագիտակի նախորդ թիւին մէջ բնօթիս գծած ու բարոյապէս ուղած էր վարձատրել գրական աշխատակցութիւնս և քիչ մ'ալ ... չափազանց:

Ստորագիր Պարոնը՝ Տիար Սեպուհ Ակունին ծանշնալու պատիւը չեմ ունեցած, նոյն իսկ կը սխալիմ երբ ըսեմ թէ տեսած եմ զինքը հոս կամ հոն, բայց գրչի մարդիկ եթէ զիրար չի ծանշան իսկ de vue, մի եւ նոյն թերթին իրենց աշխատակցութիւնը տեսակ մը ընտանեկան յարաբերութեան մէջ կը դնէ զիրենք, հոն կը ծանօթանան ու հոն կը կապուին բարեկամութեան ազնիւ կապովը:

Գովեստը ըստ իս ճոխ և թանկարժէք բեռնի մըն է, զոր կրողը, չեմ գիտեր ինչո՞ւ կը յոխորդայ, կ'ուռի, կը փչուի, հովեր մը կ'առնէ: Նոյն բաները ինծի ալ պատահէին թերեւս, եթէ անաչառ Պարոնը տեղ տեղ ասղնտած չըլլար գրելակերպս և կամ ուրիշ քառով ճերմակն ու սեւը, ուղիղն ու խոտորը մատնանիլ չընէր գրուածքներու նիւթին և ընտրութեան մասին:

Ամէն պարագայի մէջ, իբր նորաշարժ գրիչ, ընդունելով իր այնքան արդար գիտողութիւնները, պիտի ջանամ գոհացում տալ անարժանաբար ինչ սպասուած խընդրանքներուն՝ որչափ ժամանակս ներքէ և որչափ Հանրագիտակ տեղ տայ յօդուածներուս շարքին:

Իրաւ է թէ աննպատակ յօդուած մը մըքոտելը կը նմանի այն մարդուն, որ տունէն կը մեկնի առանց որոշապէս միտքը դնելու

երթալիք տեղը: Անտեղի և աննպատակ յօդուածի մը պարբերութիւնները կը նմանին ճիշդ այդ մարդուն վարանոտ քայլերուն, որոնք թէեւ ճամբայ կը կտրեն, սակայն չեն գիտեր թէ ո՞ւր կ'երթան, և ո՞ւր կ'առաջնորդեն մարմինը:

Մարմինը նիւթն է, ֆուզնէն ալ ոտքերը:

Նախապէս յօդուածագիրը պէտք է գծած ըլլայ իր քարտէսը, և ըստ այնմ սկսի պըտտկիլ նիւթին շուրջ:

Շատ անգամ կը հանդիպիմ յօդուածներու, գրուածքներու, որոնք ծիրանի գոտիի պէս եօթը գոյն փոխած են մինչեւ վերջաբանը, այդ կարգի յօդուածները եթէ շատ գեղեցիկ բացատրութիւններ ալ ունենան իրենց մէջ, չեն կրնար ընթերցողը հմայել ու որոշ գաղափար մը կազմել տալ անոր, քանի որ պարբերութիւնները, որոնք շղթայուած պէտք է ըլլան մի եւ նոյն նիւթին ու գաղափարներուն հետ չեն կապուած ու միմիայն բացատրութիւններու, ոճի դարցուածքներու, և հոսկէ հոսկէ առնուած խօսքերու անորոշ ամփոփոյք մըն են անոնք, հին ու հաստատ ու ճշմարիտ գաղափարական է:

Գրուածքի մը ոճին վրայօք խօսիլը գրողը վեր առնել, պրպտել, քննել ըսել է կարծեմ: Մեր մէջ ատենէ մը ի վեր կը տեսնեմ որ մեծ ջանք մը, անթուլ փափաք մը կայ թերթերու և կամ պարբերականներու մէջ յօդուած գրելու համար այն կարգ մը նորեւելներուն մէջ, որոնք թերթերը՝ դպրոցներու մէջ ասուին մը ձեռագիր հանդէս հրատարակելու պէս բան մը կը կարծեն թերեւս:

Յօդուածագիր մը նախ պէտք է ըմբռնած ըլլայ թերթի մը կարեւորութիւնը, անոր կոչմանը բարձրութիւնը, և ըստ այնմ պատրաստուելու է երեւիլ անոր մէջ:

Իմ մասին խօսելով, ամէն անգամ որ գրիչս ձեռք կ'առնեմ բան մը գրելու համար, աչքիս առջեւ կը պատկերանայ այն մեծ աշխարհը որ ընթերցող հասարակութիւն կ'ան-

ուանի, անոնց քննադատ լեզուն միշտ ա-
կանջիս տակն է, անոնց խիստ ու պահանջ-
կոտ ոգին միշտ վառ և կենդանի է երեւա-
կայութեանս առջեւ, կը սոսկամ, կը քաշուիմ,
և նոյն իսկ պահ մը ինքզինքս շատ տկար
կը զգամ հրատարակութեան տալու գրուածք-
ներս, որոնք գիտեմ թէ ամենուն ճաշակին
չպիտի յարմարին, ամենուն դէմքին չպիտի
գան և շատեր ծակ ծակ պիտի ընեն, պիտի
քաշքուտեն, պիտի քննադատեն և վերջա-
պէս ինձ այնպէս կը թուի թէ նոյն իսկ պի-
տի գան երեսիս զարնել իրենց արդար գի-
տողութիւնները:

Եթէ մէն մի յօդուածագիր իր մէջ կրէ
այս վախը, գրական այս միմօտիս ընդթը-
երբ բոյն դնէ անոնց ներսիդին, այն ատեն,
ինձ այնպէս կը թուի թէ մեր գրական հրա-
պարակը Զօհրապի աւելէն ալ աւելի պիտի
մաքրուի ու հոն չպիտի կրնան ցատկուտի
մանկապարտէզի կոկոններ, դպրոցական պա-
տանիներ և գրականութիւնը շարագրութիւն
դաւանող նորահասներ:

Յօդուածագրութեամբ զբաղիլը՝ գրակա-
նութիւնը սիրել է, և յօդուած գրելով մարդ
գրագէտ չի կրնար ըլլալ:

Թերթի մէջ երեւնալու համար, նախ,
աշխարհի մէջ երեւնալու է, աշխարհի մէջ
որ ըսել է գործնականին մէջ:

Փորձառութիւնը շատ աւելի բարձր է
հմտութենէն, գէթ ես այնպէս կը խորհիմ,
փորձառու յօդուածագիր մը շատ աւելի ժո-
ղովրդական դասեր կրնայ տալ՝ քան թէ իր
կեանքը՝ հատորներու, թանգարաններու մէջ
անցուցած գրագէտ մը:

Ինչպէս շատ անգամ կրկնուած է, օրա-
թերթ մը կամ պարբերական հանդէս մը կա-
տարեալ դպրոցներ են, ընթերցողները աշա-
կերտ, յօդուածագիրները վարժապետ:

Արդ ի՞նչ կապասուի դպրոցէ մը, եթէ ոչ
կարգ կանոն, ինքնակազմ, և կարող ուսուց-
չական մարմին մը:

Ի՞նչ կապասուի վարժապետներէ, եթէ ոչ
հմտութիւն, փորձառութիւն, կարողութիւն
բացատրութիւն և վարժութիւն:

Եթէ ընդունինք թէ թերթ մը չափահաս-
ներու դպրոց մ'է, պէտք է պահանջենք որ
հոն աշխատող գրչի մարդիք ալ ընտրանօք

երեւին, գիտնան իրենց կոչումը և ըստ բաղ-
դին չի թափեն իրենց կիսաւարտ կամ թերի
կարողութիւնները, որպէս զի իրենց հազա-
րաւոր աշակերտները չի վնասուին, չի տու-
ժեն և յուժկոտ չի վնասեն իրենց նիւթա-
կանը, ֆիզիքականը, նամանաւանդ բարո-
յականը:

Թերեւս աղջկան մը, պարզ ամաքեօն
քրօնիկագրէ մը չսպասուի այսպիսի լուրջ
հարցի մը շուրջ դատնալ, սակայն նպատակս
է յիշեցնել ինձմէ շատ աւելի բարձր ու կա-
րող գրիչներու թէ, պէտք է լրջօրէն նկատի
առնել այս էական կէտը, խորհիլ անոր վրայ
և պէտք եղած ազդու գրուածքներով մաք-
րել մեր լրագրական հրապարակը կարգ մը
ինքնակոչ և տհաս գրչակներէն, մանաւանդ
լուրջ թերթերու համար խօսելով, որոնք
յօդուած գրելը վարժարաններու դասաւարտի
տասը վայրկեանի տեղ դրած, թերթօրէն
կղբօսուն, իրենց տհաս գրութիւններով:

Ըստ իս աւելի լաւ է օրը օրին remplis-
sageի համար հին Աստուածաշունչէն Մով-
սիսի գիրքը արտատպել քան թէ ոմն ոք
Մովսիսի մը յօդուածը, սիրտին թեթեւ քար-
ոխտներովը համեմատ:

Հազար ներողութեամբ, կը խնդրեմ որ
մէն մի լրագրապետ իր գիտցածը շարունակէ
առանց ազդուելու այս տողերէն:

Եւ արդէն սա չէ՞ ըլլալիքը:

ՀԱԶԱ

ՆՈՐ ԳԻՐԲԵՐ

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Մեր ժամանակին է՛ն զգայուն գրիչը Մի-
սաք Մեծարենց՝ հրապարակ հանած է գե-
ղեցիկ փնջիկ մը բանաստեղծութեանց, որոնք
լի ու լի կարգարացնեն հեղինակին բանաս-
տեղծի կարողութիւնը և արժանիքը: Երի-
տասարդ հեղինակը, հեռու չինձու ու բըռ-
նալքօսիկ բռնայանգերէ, լոկ իմաստին և
զգացման տուած իր ոյժը՝ յաջողած է ար-
տադրել գործ մը, որ մինչեւ հիմա երեւա-
ցածներուն մէջ իր առաջին տեղն ու յարգը
ունի պէտք է ըսել:

Զերմապէս չնորհաւորելով իր այս առա-
ջին երկը, կը յանձնարարենք մեր ընթերցող-
ներուն ունենալ հատ մը անկէ:

Դիմի՛ Չարդարեան գրատուն, Զագմագ-
ճըլար:

ԿՈՐՍՈՒԱԾ ՊՐՈՇԵՐ

Բարեկամիս՝ Վ. Սվանսեանին

Շատ կանուխէն կը ճանչնայի զինքը, զպրոցական կեանքէս ալ առաջ:

Մէկտեղ մեծցած էինք մի և նոյն փողոցին մէջ, և հետզհետէ մեր բարեկամութեան կապերը ամրապնդուելով քիչ ժամանակուան մէջ մտերմացած էինք և սիրային գաղտնիք մը չունէինք իրարմէ պահած:

Ինք տասներեք տարեկան կար, երբ հայրը անողոք հիւանդութենէ մը չկրնալով ճողոպրիլ, հոգին աւանդեց չարաչար ցաւերու մէջ, կլորիկ հարստութիւն մը ձգելով իր միակ զաւակին ու տիկնոջը:

Գրիգոր և իր մայրը, ամէն ամառ անպատճառ կզգի պիտի երթային վայելելու համար հոնտեղի զով և խնկահոտ գեփիւռը որ կը սարսուար ու կը թռուռար բնութեան մէջ:

Կզգին մէջ կը բնակէր նաեւ վարդուհի անունով կին մը իր միակ աղջկան հետ, որ գեղեցկութեան տիպար մըն էր բառին ամէնէն վիթխարի առումովը:

Ունէր բարեձեւ գլուխ մը՝ որուն վրայ կը ծանրանար դեղին վարսերու փունջ մը, որ հեռուէն դիտողին՝ ոսկիթելերու պատրանքը կուտար, հրացայտ ծաւի աչուրներ՝ որոնք կամարածեւ յօնքերու տակ կը փայլէին երկու պսպղուն նշոյլներու հանգունակ, ձիւնին նախանձը զրգուելու աստիճան ճերմակ դէմք մը, խառնուած վարդի գոյնին հետ՝ որ ա՛լ աւելի կ'աւելցնէր անոր հրապոյրը և պաշտելի կ'ընծայէր զինքը:

Առաջին անգամ երբ Գրիգոր տեսաւ Սօֆին, սաստիկ կերպով սիրահարուեցաւ անոր: Իր միակ զբաղումը դարձուցած էր անոր հետապնդումը. առտու իրիկուն սրճարանը ժամանակ կ'անցընէր, որովհետեւ գիտէր թէ իր հուրին անպատճառ անկէ պիտի անցնէր երբ դուրս ելար:

Կը սիրէր զայն հոգիին բոլոր թափովը, կը պաշտէր, կը խնդրէր անոր վրայ: Սօֆի երազկոտ նայուածքը զգլխած էր, կախարդած էր զինքը:

Գրեթէ ամէն օր կը տեսնէր Գրիգոր: Իր

պաշտելին ամէն մէկ դուրս ելլալուն ստուերի մը պէս կը հետեւէր անոր, հիացած անոր գեղեցկութեանը ու հրապոյրին՝ որոնք իր մտածումին առարկայ դարձած էին, տեսած օրէն ի վեր:

Կը փափաքէր անոր հետ տեսնուիլ, սակայն ինչպէս պիտի կրնար, քանի որ ծանօթութիւն մը չունէր:

* * *

Կիրակի օր մը, եկեղեցի գացած էր ուր կը գտնուէին նաեւ Սօֆի և իր մայրը:

Եկեղեցիէն մեկնելուն երբ կ'ուղղուէր դէպ ի նաւամատոյց, ճամբան՝ քանի մը փայլիլը տեսաւ քարի մը քով, մօտեցաւ, առաւ ու մտածեց՝

— Ա՛խ, եթէ Սօֆիին հետ տեսնուէի, առանց վարանումի, իրեն պիտի նուիրէի ասկաւ: Գտածը պրօշ մըն էր:

Գրպանը դնելով գնաց ծովեզերքը, փչող զով հովին տալու համար իր այրող ճակատը:

Տասը վայրկեան նստելէ վերջ՝ ելաւ, տուն երթալու համար: Ծամբան հանդիպեցաւ Սօֆիի և իր մօրը՝ որոնք շուարած երեւոյթով բան մը փնտռել կը թուէին:

Իսկոյն միտքը եկաւ քիչ մը առաջուան գտածը ու համարձակութիւն առած՝ մօտեցաւ անոնց և ըսաւ.

— Տիկին, արդեօք կրնամ ձեզ օգտակար ըլլալ:

— Տղաս, պատասխանեց Տիկին մայրը, աղջիկս իր կուրծքէն պրօշը ձգեւ է:

— Հա՛, ե՛ս գտայ, ըսաւ ու գրպանէն հանելով տուաւ այդ սիրուն աղջկանը, որուն դէմքին ուրախութիւնը կը զգացնէր իր անսահման գոհունակութիւնը Գրիգորի մասին, մինչ մայրը շուարած՝ չէր գիտեր ինչպէս իր երախտագիտութիւնը յայտնել Գրիգորի, ուստի մօտենալով անոր ձեռքը սեղմեց ու՝

— Զաւակս, ըսաւ, չատ ու չատ չնորհակալ եմ, աղջկանս երջանկութիւնը քեզի կը պարտիմ:

* * *

Այ անկից ետքը բարեկամ եղան իրարու. դուրսը, ծովեզերքը և շատ ատեն ալ քաղինօն, երկարօրէն կը տեսնուէին և Գրիգոր կը ջանար բոլոր կնահաճոյ ձեւերը ցուցնել,

հաճելի ըլլալու համար Սօֆիի, որուն պատասխանները իր ուզած կերպովը կը մեկնէր:

Հետզհետէ իրենց նորահաստատ բարեկամութիւնը ամրապնդուելով, Սօֆիի մայրը փափաք յայտնեց որ Գրիգորին մօրը հետն ալ տեսնուի, բայց այդ համարձակութիւնը չունենալուն՝ խնդրեց որ անոնք այցելեն իրենց:

Կիրակի ցերեկ մը Գրիգոր և իր մայրը գաղին Սօֆիին տունը, ու ալ անկէ ետք ամէն ատեն իրարու կ'այցելէին, սակայն հոս չմոռնամ ըսելու թէ Գրիգոր օրէ օր վրայ կուտար իր ֆիզիքականէն:

Սօֆիի պատկերը ա'լ սկսած էր բնաւ աչքէն չհեռանալ, անոր մեղմ ու անուշ խօսուածքը — որ այնչափ հոգեգրաւ էր —, ալքօլի մը ազդեցութիւնը կ'ընէր իր վրայ: Ինչպէս ըսի, օր օրի կը հալէր Գրիգոր և միայն մէկ պարագայ կար անոր փրկութեանը համար. Սօֆիին ձեռքը խնդրելը:

Օր մը, դարձեալ երբ Տիկին Վարդուկին տունը գացեր էր Գրիգոր, պահ մը Սօֆիին բացակայութենէն օգուտ քաղելով.

— Տիկին, ըսաւ, օրիորդին ձեռքը ինձ կը չնորհէ՞ք:

Երկվայրկեանի պզտիկ վարանումէ մը ետք, հեգնական ժպիտով մը պատասխանեց Տիկին Վարդուկ.

— Բայց, տղաս, իմ աղջիկս արդէն իսկ նշանուած է և այն պրօշը զոր դուն գետնէն գտար, իր խօսք կապն էր ատ' անոր համար ձգեց նէ դող ելաւ . . . :

—

Բերա

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՒՆԻ

Երկու սիրակցորդ ամուսնի, իրենց ննջասենեակը առանձնացած սիրոյ խօսքեր կը փոխանակէին, բայց սենեկին մէջ ա'ւագին աղմուկ մը կար որ կարգիլէր հարսնուկին իր ֆիլիքէ ձայնը լսելի ընել ամուսնոյն,

— Կը նեղուիք կոր կարծեմ, ըսաւ երիտասարդը, և ձեր ձայնը կընդմիջուի կոր . . . :

— Այո, յարեց աղջիկը և չեմ գիտեր թէ այս քիֆ-քաֆը ուրկէ կ'արձագանքէ . . .

— Ահաւասիկ, ըսելով դրպանէն հանեց Զինիթ ժամացոյցը, որ իր ճիշդ, որոշ և ուժով թիւ-թաքներովը կը խանգարէր սիրակցորդ ամուսնի տete à tete:

ԾԱԾՈՒԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐՈՒՐՆԷ ՍԿՍԵԱԼ . . .

Տիկին Ռօզին գլուխը կը ցաւի, սիրտը յուզմունքով կը տրոփէ, ջգային անբացատրելի տագնապներէ կը չարչրկի, membres inférieuresները կ'զգայնոտին . . . :

Այնպիսի հիւանդութիւն մը, որ վայրկեանական opérationի մը կը կարօտի բուժուելու համար . . . :

Գիշերը երազած էր արդէն plaisant ջրազարգիւ հիւանդութիւն մը պիտի անցնէր . . . : Grand bien lui fasse . . . !

Ախտաբանական hysnéne dictionnaireին մէջ, un être différent անուէր գտայ . . . :

Այդ անուան դերը պիտի ստանձնէր Տօքթ. Ս. . . եանը, և կանչուելուն հարկը տեսնուեցաւ, որ նոյն այդ յարկին մէջ պիտի բուժէր naturelle այդ հիւանդութիւնը . . . :

Ինծի քեզի պէս ամուրիներու տեսած երազներուն չը նմանիր կիներու երազը . . . :

Կանանց երազը իրականանալու հանգամանքը ունի, երբ montrée de bonne volonté բուխ սրտով երազը ջուրը իյնալէն հանեն . . . :

Այդ հաճածը մերժուելիք բան չէ . . . :

Բան մը որուն՝ prophete David անգամ քառասուն թիւին մէջէն մտաւ ելաւ . . . :

Իրականութեան յանգած՝ այդ երազին allons, non ըսելու բերանդ կը չորնայ . . . :

Աշխարհի ամէնէն երջանիկ բանը, — մէյմը քսակին պարարտութիւնը, ու այդ «allons» ները չալկելու չափ տոկուն ողնայար ունենալն է . . . :

Պարտէզիդ մէջ ծաղիկներ տնկելու բնական դրգիւր կ'ունենաս ներսդ . . . : Ամօթ չէ:

Բայց ասոնք վայելելու համար, նախ քրտակիդ բերանը պիտի բանաս, յետոյ ուղղելու համար ալ թիկունքիդ վրայ ուժ պիտի ունենաս . . . :

Այս վերջինը vieillare մարդու գործ չ'է . . . :

* * *

— Հո՛ս, եկո՛ւր Մարիամ . . .

— Հրամմէ տիկին:

— Աւետիսը ինչ ձգեց . . . : (Մտաւ քան ամուսին):

— Պանքնօթ մը :

— Թո՛ղ գիշերը օղիին մեզի ընէ . . . :

— Օ՛ք նորէն ջիղերս բռնեց, սա աննըման սօքթօրս կ'անչէիր . . . :

— Հա հանրմ, Աստուած երկար կեանք տայ, տարիքդ առնես նէ, կ'անցնի տէյի գիտեմ . . . երթամ կանչեմ . . . :

Տիկին Ռօզ, անկողնոյ սենեակին մէջ, բազմոցին վրայ ընկողմանած մաշերը խառնիխառն, աչքերը քնաթաթախ, մարմնոյն ամբողջ ծածկոյթը շրմիկն մը թափանցկոտ օդին տաքութիւնը իրաւութիւնը իրեն՝ այդ անպատկառ չպլախութեանը . . . :

Այս խառնափնդոր տարօրինակ հագուստին՝ (à travers) Հիւրերատի աշակերտը այլանդակօրէն բայց քնականօրէն խառնուեցաւ . . . :

Գլուխը անոր զգլխիլ կուրծքին դրած diagnostiguse ըրաւ . . . — ձայնդ մի հաներ, մի շարժիր, գլուխդ վեր առ, ոտքերդ սանկ մը բռնէ . . . :

Տիկինը բժշկուած էր . . . :

* * *

— Բարեւ միւսիւ սօքթօր :

— Աստուծոյ բարին էֆէնտի :

— Ի՞նչպէս էք :

— Շնորհակալ եմ :

— Ձէ՛ք ըսեր թէ, մեր տիկնոջը Ռօզին հիւանդութիւնը այս ինչ չանցնելիք հիւանդութիւն մ'եղաւ մեր գլխուն : Դուք քաշեմ-նիւքիւն չ'ունէիք, նոր քնոյթ ըրի՛ք, ամէն օր կուգաք, կ'ինս կը նայիք ու կը նայիք, նորէն ամէն օր հիւանդ, կը տքայ կը տքտըքայ . . . :

— Բայց յարգելի բարեկամ, ձեր տիկինը հազիւ երկու երեք անգամ նայած եմ, և կը հաստատեմ որ շատ տոկուն և առողջ կազմ մ'ունի : Ձեր լուսահոգի հօրը ատենէն իսկ կը ճանչնայիք զիս, և կը յուսամ թէ պէտք էր վստահ ըլլայիք խղճամբտ արուեստիս փորձառութեանը մասին : Երախտագիտութիւնը արդէն մեծ պարտք մը կը դնէ նոյն ինքն ձեր վրայ — երբ ձեր տաժանելի մահացու հիւանդութիւնը՝ որ այն ատեն ամէն բժիշկ ձեռք քաշած էր, ոգի ի բռին աշխատելով ձեր կեանքը նորէն ես փրկեցի : Ձեր այդ առաջուց խօսքը՝ պարզապէս եմալիլք

մ'էր ինձ, վստահ եղէք որ չարաչար կը սըխալիք ձեր տաժած իմ մասիս յոռի գաղափարին, մանաւանդ որ տասներկու տարիներէ ի վեր, ձեր ընտանիքին մասնայատուկ բժիշկըն եղած եմ . . . :

— Ես գիտեմ որ սօքթօր էֆէնտի, դուք ձեր գործին մարդն էք. կատակ ըրի, ներողութիւն : Բայց չկրնա՞ր ըլլալ, որ, ձեր հիմաութեան քառորդը չունեցող պարզ բժիշկ մը հասկնայ, և դուք կարելի է ըլլայ որ չը հասկցած ըլլաք, ասոնք այն տեսակ իրողութիւններ են որ ամէն օր մեր աչքին առջեւ կը պարզուին, ալ մտածմունքս զիս կը տանչէ, սիրայօժար ամբողջ ունեցածս վատնեմ, սա կ'ինս բժշկուի, կ'ինս ըսելը ինձի համար հոգի ըսել է . . . : Լաւ միտքս ինկաւ, երէկ երեկոյ տիկինը դեղագիրը պնօյն վրայ մոռցած ըլլալով, առի գրպանեցի և ուղղակի ձեզի դժգոհալու պիտի գայի . . . :

— Տեսնեմ սա դեղագիրը . . . :

— Ահաւասիկ, նոյն ինքն ձեր երէկի թուականով . . . :

Տօքթօրին դէմքը խոժոռեցաւ, ու բարկութեան նոպայէ մը բռնուեցաւ, — թերեւս յաջողութիւնը կամ անյաջողութիւնը եղած ըլլար . . . :

— Բարեկամս, անկեղծութեանս հաւաստիքը կ'ընծայեմ հիմա, ուշադրութեամբ ունկընդրէ . . . :

Ո՛չ այս իմ դեղագիրս է, և ո՛չ ալ, այս իմ ստորագրութիւնս, լոկ անունը իմա է . . . : ձեր տիկինը՝ ստորագրող ընկեր մը ունի եղեր . . . ստորագրուած այդ խոշոր կեղծիքը ու գռհհիկ ազդը, աղետաբեր ըլլալէն դադրեցնելուն ճարը խորհեցէք . . . :

Ա. ԳԱՐՈՒՃԻՆԻԱՆ

2 Ե Կ Ո Յ Ց

Էտիքնէի և շրջակայներուն համար դիմել միմիայն թերթիս գործակալ-ներկայացուցիչ՝ Գէորգ Էֆ. Աբրահամեանի :

Ամէն 'անոնք՝ որոնք ատենին չեն նորոգեր իրենց բաժանորդագրութիւնը, օրը օրին կը դադրին թերթ ստանալէ :

ՓԻԼԻԿԻՆ ՈՒԽՏԸ

[ԱԼԷՄ-ՏԱՂԻԻ ԿԵԱՆՔԷՆ]

Մէկ ու կէս խօսք յօդուածս սկսելէ առաջ, քանի որ օդին պէս առիթն ալ նպաստաւոր է:

Մինչեւ հիմա գիտէինք որ միմիայն թըռանվայի անփորձ ձիերն են որոնք չեն քաշեր ... կառքը, բայց տխուր ենք յայտարարելու թէ՛ խմբագրաձագեր ալ կան եղեր, որոնք չեն քաշեր ... ուրիշներու յաջողութիւնը և կարողութիւնը:

Բայց կարծեմ թէ, չեմ գիտեր որ թուականին՝ անգամ մը յիշած ու քշած եմ այս էրբ թէ սրամիտ tournurep . . . հէ՛:

Ներեցէք, ձեր խոնարհ ծառան որ ինքզինքը օրուան զաւեշտագիրը կը կարծէ, չունենալով, յաւէտ ողբացեալ և անզուգական Դերձակ Սարգիս Փափազեանի կարողութիւնը, սրամտութիւնը, հմտութիւնը, արժանիքը և դեռ այն բոլոր առաւելութիւնները, որոնք խմբագրատանս սենեկին դրան առջեւ յօդուած ի ձեռին մերժուելու սպասած առանձինքն ի վար կը վազէին . . . դրածս նորէն գրելու, կրկնութիւններ ընելու, ծամածս կըլլելու և կըլլեցուցածս նորէն ծամելու հարկին մէջ կը գտնուիմ . . . : Եւ կը խնդրեմ որ հաշտ աչօք նայիք, ուղիղ սրտով դատէք և ... բան մը, որուն համար ծնրադիր կաղաչեմ (°) չի շփոթէք երկու Փափազեանները և զիս անոր հետ նժարը չի դընէք՝ պոչի ցաւէ տանջուողներուն պէս, և գիտնաք՝ ինչպէս գիտէք արդէն, թէ այլ է Սարգիս Փափազեանը իր մէկ մէթը չաւ-չաւի գրական աշխատակցութիւնովը, և այլ՝ ան որ ԱՐԵՒԵԼԻՔ պատուական օրաթերթը ըստ արժանւոյն գոված ըլլալուն համար գոհուած էր գրչակի մը և որուն տասերկու տարուան աշխատութիւնները դեռ կը մնան foixfoixոններու մէջ:

Բայց ձգենք որ շահախնդիր մարդիկ դիմեն այս տեսակ ստոր միջոցներու, մենք շարունակենք մեր գործը, առանց բիրէի խա-

ծուկի չափ ազդուելու չարակամ գրուածքներէն, որոնք գահգահներ կ'արժէն և ոչ ալ ինչ:

* * *

Ի՞նչ պիտի ըսէինք ...:

Այո՛, գրել բան մը, որ Ալէմ-տաղիի օրուան կեանքը յիշեցնէ:

Չասիկին սովորութիւնն եղած է, այցելութիւններու նիւթ ընել կարգ մը բանաձեւեր, որոնք հիննալ չեն գիտեր Այվազեանի գաւազանին պէս, ինչպէս՝ Եկեղեցի գացիք, քարոզը ինչպէս էր ... պնակներ ո՛հ ... միշտ պնակները ... պահարանը կընիկ առեր են չին առեր ... Ժամկոչը մէկ միշտէրին հինգնոց մը ուղեր է Լէն. Լէն. Լէն., չէ՛ք յիշեր, այսպէս չէ՛ն այն հինգ վայրկեանցու խօսակցութիւնները, որոնք կը կրկնուին ամէն տարի նոյն օրին նոյն նիւթերով:

Այսպէս ալ ներկայ եղանակին է՛ն բանուկ խօսակցութիւնն է Ալէմ-տաղին:

Ալէմ-տաղի գացիք ... որչա՞փ կենալու միտք ունիք ... այս կիրակի մինք միտք ունինք երթալու ... մենք հինգչաթի պիտի ելլանք երկուշաբթի պիտի իջնանք, օրէ պիտի երթանք օրէ պիտի գանք, և այլն, և այլն, և այլն:

Ատեն մը, ինչպէս կը պատմեն, ծերերը Ալէմ-տաղին համազգային հիւանդանոց մը նկատած են եղեր: Օրուան բժիշկները այն ատենին իրենց հիւանդները Գաբրիէլ հրեշտակապետին ձեռքէն խելէ վերջ, անմիջապէս Ալէմ-տաղի կը զրկեն եղէր, որպէս զի անտեղի օդը և ջուրը բժշկական գիրքերէն դուրս հրաշքներ գործէ, և ատանկ ալ կըլայ եղէր:

Հիմա՛:

Երբեմնի այդ խեղճուկ ու գեղջուկ Ալէմ-տաղին ընդարձակ bal champêtre մը, ահագին թատրոն մը դարձած է, և ուր տեսնուած լիւսը՝ լամբ լիւսերէն ալ փայլուն և

քուալիքները՝ Բերայի Բրթի-Շանէն ալ ճոխ է :

Առաջ հիւանդները ապագինելու համար հող կը տարուին եղէր, այսօր պայր-քու-բիի պէս առողջներ հոն երթալով քաջալուաի պէս ետ կը դառնան կոր : Ինչո՞ւ :

Որովհետեւ նախ Ալէմ-տաղի երթալու համար Սկիւտարի նաւամատոյցէն կառք նըստողները երեք ժամ շարունակ քնիք չօրպասի կըլլան ցնցուելով, մինչ բարեբար արեւը իրենց վրայ հսկելով միշտ, քաղ քալապի և պէյին քալասի կը պատրաստէ անվրէպ : Եւ որովհետեւ շիքուլիւնը պայման առաջին է, քօռսէին մէջ սեղմուելն ալ յանուն կենցաղագիտութեան նապա :

Ասիկայ դեռ օդափոխութեան (°) և կազդուրման (°) ալֆան է, կրնայինք մինչեւ օմեղան յիշել հոս մի առ մի, բայց տակաւին շատ մը ըսելիքներ ունենալնուս զանց կընենք և կանցնինք բուն նիւթին :

* * *

Չոր թութենց Փիլիկ էմմին, որ հակառակ իր գաւառի սովորութեան, չեմ գիտեր ինչպէս համոզուած ու տեղացի օրիորդի մը հետ ամուսնացած էր, թերեւս հաւնելով, տիկնոջ խաժուկ աշուկներէն, պարտապանաց մարմինէն, չուխուռ չուխուռ այտերէն, սիւլիկ յոնքերէն և դեռ կարգ մը առաւելութիւններէն չլացած, բայց և այնպէս տարի մը երկուք, երեք, սպասելէ վերջ երբ կը տեսնէր թէ իր էգ ընկերուհին իրեն յաջորդող զաւակ մը չի պարգեւէր որ Չոր քուքենց տիպար մականունը և համբաւը զաւկէ զաւակ չ'անյետի, սկսած էր ասոր անոր գիմելով ճար ճարակ փնտռել :

Բժիշկները գիտութեան բոլոր գաղտնիքները թափած էին, Մաքիամ տուտուի պէս կախարդութիւններ իրենց համբիւն կուտերուն չափ դեղեր ըրած էին և դայեակները իրենց փորձառութեան ներածին չափ աշխատած էին որպէս զի Փիլիկ էմմին հայրիկ ընեն, բայց ի գուր, տիկին Վերմին կրկին կը մնար իր ամուլ վիճակին մէջ, բան մը որ սնանկութեան չափ մտածել կուտար խեղճ մարդուն :

Այս անգամ, չեմ գիտեր որ խելացի դաւիթը, համոզելով լուրջելով առաջարկած էր

մեր Փիլիկ էմմին որպէս զի անգամ մը իր կինը Ալէմ-տաղի տանի ու հոն իրա-Յունացի բլուրը հանէ, ասով Տէրը իրենց մանչ զաւակ մը պիտի տար անվրէպ :

Հոս չենք ուզեր յիշել թէ ինչպէս Փիլիկ էմմին համոզուեցաւ ու գործադրեց այդ առաջարկը, և կսկսինք հետեւել իրենց ճիշդ Ալէմ-տաղի հասնելուն :

— Օ՛խ ... սա խոռուղուկը մտայ նէ գիտես քի ներսիդիս ֆէռահցաւ Փիլիկ աղա, սանկ սիրտս պացուեցաւ գիտեմ քի ... կըսէ տիկինը, հոն ուր կառքը կեցաւ անտառին մուտքը ընելու համար :

— Վէրթինի՛կ, ներսս բացուեցաւ կըսես նը, սուտ կու կալլէս հիւրըմանքդ, գիրա, տըհա նէօր տի գանք զաննըս ...

— Հա ամա էօմրիւս մէջը ասանկ աղուոր տեղ մը տեսած չունէի տէ, ներսիդիս ալթիւթ եղաւ ...

— Հարիթաճա բաներ օր կուզուրուցես իսէ, էկէնմիշի պէս կիւ գեայ ընծի, ծառայականս տըհա բան մի չի հասկցայ ո՛ւր ...

Կառքը քիչ մը կենալէն վերջ ուղղակի գիւղ կ'ուղղուի :

Օրը կիրակի է, ահագին բազմութիւն մը արդէն եկած խոնուած է սրճարանները, ինչպէս նաեւ Յովակիմ աղայի օթէլը՝ ասեղ ձգելու տեղ չիկայ :

— Սա խախվէն նստինք քիչ մը Փիլիկ աղա, տահա կանուխ է գիտնալս, նայէ բիւթիւնն ալ հոս են նստեր, կըսէ տիկինը, Պէյօղլու պիշիմի բէշ բռնելով և զինքը դիտող հաղարաւոր աչքերուն շիրին երեւնալու ձեւեր մը առնելով :

— Թըմամ ... մենք ֆէօս ի՞նչ մուճիպօք եկանք կնի՞յ ... սըհաթ մի էռաջ աս իրա-Յունացի է, ի՞նչ է հող էլլենք ուր, իշ օր տի ըլի իսէ թըմամը իճրա անէ՛նք ու ետ դառնանք, կ'ըսէ Փիլիկ աղան, տաքէն գըտակը ձեռքը բռնած չորս դին նայելով :

— Մեղայ ըսէ, զահէր մինակ ադ բանին համար եկանք, սըտեղը չպիտի նստինք, օթէլը կերակուր չի՞ պիտի ուտենք ...

— Դիւն ի՞շ կու կալլէս կնի՞յ ... աս թէրթիպը գուրուցողը ըսաւ թը, ծօմ բերնուց տի շուլուինք լեռան թառն ի վերը,

ետեւ տի դառնանք, դիւն իսէ, օթէլը տիւ-
շիւնմիւն կըլլիս ...

— Աման Փիլիկ աղա, վրաս կէշուծիւն
կուգայ կոր, սըտեղը տեղ մը նստէինք ...

— Խորոտ, խորոտ, ըսել է լեռն ի վեր
շուլլուելու հաճէթն ու մուծիպը ֆէսիս ը-
ղաւ ... հըմայէկս օր վրադ գէշուծիւն ի գալ
պաշլայեց իսէ, ֆայտա ըրաւ կու հասկցուի,
պինակէն ալէյհ, ետ դառնանք, չըլլիւր ...

— Քա ճանըմ, բիւթիւն մեղի կը նային
կոր Փիլիկ աղա, ըսելով տիկին Վերթին շի-
տակ սըճարան մը կուղղուի, մինչ ամուսինը
ճարահատ իրեն կը հետեւի:

Սըճարաններու մէջ առաւօտեան խրախ-
ճանութիւնները սկսած են արդէն, բոլոր հոն
գտնուողները այր թէ կին, փոխանակ թաշ-
տէլէնի անարատ ջուրը խմելու, ինկած են
օղին, և յաջորդաբար սրուակներ կը պար-
պուին, խլացուցիչ պուռհահաներու մէջ:

— Կնիւյ ... աս կատիւ շան տըղաքը
ի՞նչ ճիւղերս կու խառնին, օղի կը ճնկին իւ,
սէրխօշ կըլլին ...

— Հապա, հոս եկողը, անանկ կըսեն քի
խըյախ գէֆը կը հանէ տէյի ...

— Շատ խորոտ, էօյլէ իսէ աս կընուրտոցն
էլ տէրտը չօճուիս տի ըլլի ուր հոս թօփլան-
միւն էն ըղիւր տը չօճուիս տի շինին ...

— Չէ ճանըմ, աս ամէնքն ալ զաւակ
ուռնենալու համար ուխտ չուռնին եա ... չա-
տը էյլէնճէյի համար եկած են Փիլիկ աղա ...

— Էյլէնճէյն ըստըմպօլը պակաւ է ուր
թախ ֆէօս կուգան իւ զիֆթլէնմիւն կըլլին ...
ըռըպայի բարա կիւտան ու զըխըմը բօրեր-
նին ի վար կու խաւրին ...

— Քա ճանըմ, ինչո՞ւտ պէտք, դուն քու
տէրադ լաց, էլ ալէմին գէֆը քեզի՞ ինչ ...
նայէ բօրս ալ անօթեցաւ, ինծի կուգայ քի
Յովակիմին օթէլը կըսեն նէ սա է ...

— Օթէլն ի՞նչ տի կալէս ճանըմ, հըմա-
ճուկ տաս հատ չիւօզ կու կարմրցուենմ,
պիր տէ էքմէք, կու կշտանանք կերթայ,
իրիկուն տիւն կերթանք իւ խըպախ տօլմա-
սին աֆիլէթ կանենք, չըլլիւր ...

— Ամօթ է Փիլիկ աղա, հոս եկողը օ-
թէլը կերակուր կուտէ ...

— Կէօղիւնիւն պէպէկիւնիւ սէվտիկիւմ,
միւնք օր ֆէօս եկանք իսէ, չօճուիս վաստը-

կելիւ հըմար էր զաննս, դիւն իշ կու կալ-
լէս, օթէլը ի՞նչ ճիւղերս է ...

— Վրաս լէօպէթ կուգայ կոր Փիլիկ ա-
ղա, նայէ ճանչուոր ալ կայ, կեցած տեղս
կը քրտընիմ կոր ... կըսէ տիկինը ձեռքի
թաշկինակովը դէմքի բուտուան խսմելով ...

— Մաշալլա՛հ, մաշալլա՛հ ... խայլէին
մէջն իւր հալլէնմիւն կուլլիս, լեռն ի վեր օր
շուլլուիս իսէ էքիզ տի բերես զաննս ...
էօյլէ իսէ քալէ տը քեզի փառաւոր ֆասուլ-
եայ բիյազի մի իքուամ անէմ կնիւյ ...

Կինը օճէն սովորած է մարդ համոզելու
եղանակը, և ահա ասոր համար տիկին Վեր-
թին ինչ կընէ չընէր կը համոզէ իր ամուսինը,
որպէս զի Յովակիմ աղայի օթէլը ճաշեն:

Ուստի, սըճարանին մէջ բաւական մը
նստելէ վերջ երկուքը մէկ ցերեկուան մօտ
կուղղուին դէպի պանդոկ, ուր զիրենք կը
դիմաւորէ հանրածանօթ ու գերահռչակ Յո-
վակիմ, աղան իր կիրականօրեայ Տըմի-Ֆաւոլը
որ անգամ մը եւս կը փայլեցնէ իր արհես-
տին վարժութիւնը:

Չարմանալին հոն է որ երբ Յովակիմ ա-
ղա ըստ իր բարի սովորութեան էն անուշ
դիմագիծերով և է՛ն լուրջ քօմըլիմաններով
շահաւորել կուգէ իր հիւրերը, Փիլիկ աղան
ալ իր կարգին, ըստ իր վաղիմի բնոյթին,
տասը բարայ աժան սակարկելու համար լե-
զու կը թափէ անոր առջեւ, բարեկամութիւն
վաստակելու և ատով դրամ ալ շահելու մտօք:

Եւ տեսէք թէ պատկերը որչափ զուար-
ճալի է, երկու վարպետներ դէմ դէմի:

— Օ՛ ... հաճի աղա, բարով եկար հա-
զար բարի, ամա աչքս ճամբանէր զաթը,
կըսէ Յովակիմ աղան ձեռքերը շփելով և
պիտերը բերնին երկու կողմը բռնելով:

— Օ՛ ... Ասծուծոյ բարին Յովակիմ
էֆէնտի, զաննս քեզի հեղ մը տեսեր եմ,
ֆըխաթ զիննիմէ տանկ տիմէօր ...

— Օ՛ ... հաճի աղա, ես քու քիչ մը
քիչ բարատ եմ առէր, քիչ մը քիչ աղեկու-
թիւնդ եմ տեսեր ...

— Հա՛, հա՛, հիմա զիննս տիւն տուաւ,
հրամանքդ մեր խանիւթը եկար իւ զաննս,
ծառայականս ալ թահվիլի սէնէթով պիւա
քէֆիլ ֆայիզը միւթէսէլսիլէսիզ բազում
անչէ տուի՛ իւ ...

— Եաղլըջ ես հաճի աղաս, ես սառաֆի հետ գործ չունիմ, փառք Աստուծոյ... ֆախաթ, սըֆաթդ եապանճի չերեւար կոր... էյ հրամանցէք, մատա՛մ, սանկ չառտախին տիպը նստեցէք տէ սէրին սէրին մինչեւ քի...

— Զահմէթ մի կալլէր Յովակիմ էֆէնտի, ծառայականդ ավոռները կու տանիմ...

— Տէր ողորմոյայ, հաճի աղա, կը վայլէ՞...

— Էյ հրպա մենք եապանճի չէնք, ֆէօս ուր կու տեսնիս մեզ իսէ, ըռջի ընգամը վէլէվքի էկած ինք, ֆախաթ հրմայէկս քեզի ըսիմ ուր պախշա վախիթ տայիմ իւլ էվքաստ միւսլու սէօզ տի սնիմ...

— Ողջ ըլլաս հաճի աղա, օրերդ շատ ըլլայ... ըսելով, Յովակիմ աղան շուտով մը կերթայ օղի կը շտկէ հանդերձ մէվէներով եւ կը բերէ մօտերնին, զայս տեսնող հաճի աղան ոտքի ելլալով,

— Սման էֆէնտըմ ի՛նչ զահմէթ կու կալէս, իրաւ քի իքրամ կանիս, ֆըխաթ սա շարթըն ու շուրութը տի դնիմ ուր, էկէր օր հրամանքդ օր մի մեր խում Խաբուին Սանտըխ պուռնին ուր հիւրըմմէս, հոնից մըսքաֆին էլճէպ չի տի ընել տամ հրամաննոցը...

— Խոլայ է հաճի աղա, դուն քէֆդ նայէ, կըսէ ու կը բաժնուի, կոխը վերջին պահելով:

— Կու տեսնաս կինի՞յ... վախտին տօսթ խաղանմիշ ըլլալուն զէֆքը... նըյէ, հէրիֆը իքրամ կու կալլէ, իքրամ կու կալլէ ուր մաթ կուսէ...

— Հա ա՛մա Փիլիկ աղա, գիտնալըս ա՛սոնք փարայով են... պէտէհավա հոս բան չիգայ...

— Հայտէ կէ՛թ... զէվզէ՛ք... աչուիդ ո՛ւր էր, ընկըճներդ բարտելիդ, թող լսէիր իւր ակեհա՛ ըլլէիր ընցածին ու դարցածին, հէրիֆին օղլին էթէկսիւզ սէթրին կու թուռցունէր իւ չըխա շէնլիկ կանէր իւր սիրտս շահի իւ ես ալ ինքը տավէթ անէմ Սանտըխ պուռնին...

— Քա ճանըմ Փիլիկ աղա ըռէզալէթ է, նայէ մէկ կողմէն կուգան կոր քի սեղան նստին տէյի, կըսէ կինը խիպէն կարմրած:

Եւ իրօք ցերեկուան մօտ բոլոր անօթի

փորիկները տակաւ կը ժողվուին թապլ տօթի համար եւ սեղանը արդէն պատրաստ էր:

Յովակիմ աղա հաճի աղային պատիւ մը ըրած ըլլալու համար, մասնաւորապէս հրաւէր կը կարդայ,

— Հրամանցէք հաճի աղաս, աղուոր տեղ մը նստեցնեմ ձեզի սեղանին վրայ...

— Օ՛... Յովակիմ էֆէնտի, աս խալապալուխս էնտ կոյնէրէ իսէ քիւլլին տի նստի՞ն... է՛ն էօր մանտամայովը էկած է իսէ ընա՛լ տի նստի...

— Հապա, հաճի աղաս, հոս թապլ տօթ է, ամէնքն ալ մէկ պիտի նստին ուտին, խմին զէֆք ընին... կըսէ պանդոկապետը կոտորտուելով:

— Թապլա թուլ է իսէ, մէզի էլ շարթ ու շուրութ է էօր զատ թապլա մի բերէս իւ էրիյ կնիյ դէմ դիմաց ըսինք իւ աղաճուխ չէրէզլէնմիշ ըլլինք...

— Փիլիկ աղա, կարգ կանոնէն դուրս չելլանք, ի՛նչ զարար ունի, մենք ալ կը նստինք կուտենք անոնց հետ...

— Էտի ի՛շ ճիվէրս է իւր ես տի ուտիմ, պախշասին էլ լօխմաս տի համրէ, ես ատ ապուրը չի տի կրնամ կալլէր կնիյ, էկուր մենք սըվըջը դնենք ու սը պախալին բարէօլ սըռտէլա մի չինել տանք...

— Կէտինին տիպը կասնիմ կոր Փիլիկ աղա, բիւթիւն մեզի կը նային կոր, ըսելով կինը առանց պատասխանի սպասելու կանցնի սեղանը կը նստի, որուն չուշանար հետեւելու մեր Փիլիկ աղան, միշտ անիծելով այն զաւակը՝ որուն տէրը ըլլալու համար կը քաշէր այս տառապանքները:

* * *

Եւ որովհետեւ տարին անգամ մը պատահութիւնը կունենանք խօսելու Ալէմ-տաղիին վրայօք, ձգենք Փիլիկ աղան որ կըլլէ՝ շնորհիւ իր տիկնոջը, այն ձեթաթաթաւ տօլմաները, զորս յատուկ պատրաստել կուտայ Յովակիմ աղան, իր միամիտ պիլիկներուն կլեցնելու համար, ու մենք քիչ մ'ալ զբաղինք տեղւոյն ընդհանուր փուլերովը:

Այսօր Ալէմ-տաղին կատարեալ պալ-շամբէթն մը դարցած է պէտք է ըսել: Հայկաֆ ընտանիքներ, որոնք տարւոյն մէկ ա-

միսը կուգան հոս անցնել, օրը երեք չորս քօսթիւմ կը փոխեն, իբր թէ սուառեկ տը կալաի մը գտնուէին, սակայն չեմ գիտեր թէ գաղափարնին ալ այնչափ փոփոխական է:

Թաշ-տէլէնը, որուն ջուրը աշխարհահռչակ անուն մը ունի, այնքան չի քշուիր հող, որչափ Պօմօնթիի գարեջուրը և Միֆօթիի շիսակը, եթէ չիտակը պիտի ըսենք:

Զուռնա, լաթէռնա, տիւմպէլէի, կռամֆօն, հոս տեղի օւքէսթռօն կը կազմեն, որոնց համար կը մարմրին ու հոգի կուտան նոյն իսկ Սառազամներ, Հէկէներ, Պոպօներ լսողները, և այս՝ ... ալքով շնորհիւ անշուշտ:

Այն կիները՝ որոնք Բերայի մէջ ամօթ կը սեպեն օղի խմելը և նոյն իսկ խօսքը բերան առնելը, ինքզինքներնուն ելած չախրո քեֆ ըլլալու աստիճան կը ճնկեն և չեն սեպեր միջավայրը, քանի որ կեդրոնէն հեռու է:

Բայց բան մը կայ, նոյնպէս այն ընտանիքները և օրորդները, որոնք Պոլսոյ ո՛ր է մէկ արուարձանին մէջ բնակելով սերին խայմալ ըլլալը միայն գիտեն, հոս չուտով (ե)ը (է)ի կը փոխեն և նոյն իսկ ատոր քեզը կը պատրաստեն, վար իջնալնուն հրապարակիւրու և քշելու համար:

Յերեկին Թաշ-տէլէն ըստած վայրը, քիչ մը կը յիշեցնէ Պահլէ-գարուի կոնակը գրտնուած հրապարը, ուր համալ չամալ կը ժողվուին միս ուտելու, հոտի և ծուխի ամպերու մէջ: Ծիշդ նոյն տեսարանն է, սա տարբերութեամբ որ հոստեղի քեպապ ուտողները լիս բուտուած քսուած են, մուսուլիմ տը սուա պլուզ հագած, շամբանէ պօթերով:

Աչքի սէրը, և նայուածքներու նշանակալից դասընդացքը, հոս Թաշ-տէլէնի մէջ զմարդ տօթեմ ան ամուռ կը հռչակէ, այնքան վարպետ բռնակոններ կը գտնուին, որոնք համալսարանի պէս ձրի փորձառական և տեսական դասեր կաւանդեն առանց դրամական փոխարինութեան:

Եւ բան մը որ է՝ անուշն է, Թաշ-տէլէնի բուն աղբիւրէն չի ճանչցած մէկ օրիորդիդ գաւաթով ջուր հրամցնելը և անոր խմուկը առանց թափելու վրան թամամցնելով կուլ տալն է: Ով որ յաջողի այս թացիկուլ թիւնը ի գլուխ հանել, անկիայ լի ու լի հէ-

լալ ըրած կըլլայ, կառքին aller retour հաւերը քսան զրուշը, Յովակիմին կէս անգղիականը, և Շէյթանին չորս բարեւին քառորդ մը պախշիշը ...

Թաշ-տէլէնէն վերջ խօսու-պաշին, որ ջուրեան է երեկոյան դարձին, և ուր անպատճառ կը ժողվուին ժամը տասնէն սկսեալ:

Հոս կատարեալ կրկէս մ'է ամէն անոնց, որոնք օրուան ժամերուն մէջ թէ գիւղը և թէ Թաշ-տէլէնը մէկուն հաւնած ու անոր արեւուն (°) քիւր դարձած են խմելէն:

Ալ ձիուն ապաւինողը, կառքին հաւնողը, իր գեղեցկութեանը և քօսթիւմին փայլէն նշացողը, պիսիկէթին է՛ն վարժ եղողը, վերջապէս դրպանը մէկ երկու մէծիտ ունեցողը, բոլորն ալ հող ինքզինքնին կը ցուցնեն, ճախա ընելով ամէնքը իր կարողութեանը չափ, մինչ մէկ երկու ծանօթ ընտանիքներ, լաթէռնայի մը լիկ լինկանկներով քատուի մը կը կազմեն, զոր տիտիժէ կընէ գաղիներէն լեզուն դրօթ ընող և անպատճառ ինէ քէնէ աղէկ տեսնելով հանդերձ 15 թիւ ալնոց կրող չիք միւսիւ մը, ճերմակ ֆանէլա բանթալօնը պլէօ ժաքէթով՝ պայման առաջին:

Ալ մութը կը կոխէ, արեւը թերեւս խըպնելով եղած թացիկ ու գուռուպ արարքներուն, ահանատես չըլլալու համար գլուխը կը քաշէ հեռուէն ըլուրներուն ետեւ, մինչ օրէ դարձողներ երեքիններով դարդարուն կառքերը կը բազմին, պուլաշը կերակուրի սեղիները պատրաստ, և որ չիշերու տակ մը նացած օղին սուսը կուլ տուող կառապաններ երկու երեք մտրակի հարուածով թըռչունի պէս կը սուրան ալք վայրէն, կէս ժամ վերջ կեցոյ տէր ըլլալու համար ամայի ճամբուն երկայնքը:

* * *

Մութը պատած է հիմա, լուսին ալ չիկայ, պզտիկ տղաքներ՝ իրենց քօսեղի և ստամոքսը լեցուն փորերու վրայ փռուած կը քնանան, ընտանիքի հայրեր կէս քուն կէս արթուն, օրուան ծաղքէն աւելի կառքին ցնծալիք անգղիականին վրայ կը մտածեն, օրորդներ գլխարկնին հանած ալանջէ ա-

կանջ հաւանած երիտասարդներնուն վրայօք կը խօսին, գեանէն բարձրացող փոշին փառաւորապէս կը նստի ժամերով հայելիին դէմ մալա եղած և հիմա չալը սիւքիւրկեսի մազերուն վրայ, և վերջապէս առաւօտեան թարմ ու զուարթ գնացքին յաջորդած է լիկած ու մեկամաղձիկ դարձ մը:

Մութին մէջ գալարուող կառքերուն մէջէն խուպոտ խօսուածքի մը արձագանգը դեռ կը հնչէ ականջին:

— Նայէ օր ըսիմ վերգիւնիկ, էկէր իւր ըսխըտար մէսարիււի որ արեցի իսէ էնձամը խայր ու պէրէքէթլիւ մանչիւյ մի օր պաղըշլամիչ չանէ՞ս իսէ ... մէրձիին տի դիմոմ վէլհասը թէքիֆ տի անէմ իւր խըսըր կնիս առէք իւ ընծի կուլուշկայ օթուրան պէսլիւ հաւ մի ճարեցէք, զիրա թըմամ խաւիւթի մի քիրա մասրաֆ կալեցանք ...:

ԼԻԼԱ

ԱԶԳ. ԿԵՂՐ. ՎԱՐՓԱՐԱՆ

ՂԱՆԼԱԹԻԱ

ԺԱՄԱՐԱՆԻ ԿԱՐԳԱՐԱՆ

Բերամացի հարցախնդրեանց 1906—1907 թրջանի

ընթացաւարտ կարգին.

1907 Յա. 8	Ուր.	— Օսմաներէն, Պարսկերէն, Արաբերէն.
» 11	Բշ.	— Պրանսերէն.
» 13	Դշ.	— Հայերէն — Աշխ. Մատ. Պատմութիւն
» 16	Շբ.	— Իմաստասիրութիւն.
» 18	Բշ.	— Ընդհ. Գրականութեանց Պատմ.
» 20	Դշ.	— Տնտեսագիտութիւն.
» 22	Ուր.	— Անդկերէն և Գերմաներէն.
» 27	Դշ.	— Իրաւագիտութիւն.

ՅԱՆՈԹ. — 1. Հարցաքննութիւնները կ'սկսին կէս օրէ յետոյ ժամը 1ին (Ը. Ե.):

2. — Իւրաքանչիւր քննութեան տեսչութիւնն է առ նուազն 2 ժամ:

ՄՏՔԻ ՇԻԹԵՐ

Իրազիտութեան դասին:
Ուսուցիչը (Աւակերսիմ). — Պարոն Լեւոն,
բուրդը ինչէ՞ կը շինուի:
Աւակերսը. — Ոչխարի մազէ:
Ուսուցիչը. — Բուրդէ շինուած բան մը
կրնա՞ս օրինակ բերել:
Աւակերսը. (Պապանձկոս շուարում) ...:
Ուսուցիչը. (Աւակերսիմ բանքալօյնը բրո-
նելով). — Աս ի՞նչէ շինուած է:
Աւակերսը. — Հօրս հին բանքալօյնէն,
միւսիւ:

×

Պղտիկ ընծաները բարեկամութիւնը կար-
ծարձեն, իսկ սերը մեծ ընծաներով կար-
ծարձուի:

×

Սէրը ակուպի ցաւի կը նմանի, իրիկուն-
ները կը սաստկանայ:

×

— Երբ ամուսնական յարկ մը անհաւա-
տաբիմ կնկան մը երեսէն պզտիկ դժոխք մը
կը դառնայ, այդ դժբաղդութեան պատճառ
կինը կըլլայ հարիւրին 85:

— Իսկ էրի՞կը:
— ... Մնացածը:

×

Ծերունի մը մանկամարդ կնոջ մը կը հե-
տեւի:

Այս վերջինը ձանձրացած ետին կը դառ-
նայ և՛

— Պարոն, կըսէ, պարապ տեղը կը յոգ-
նիք, միանգամ ընդ միշտ գիտցէք թէ սիր-
տըս արդէն ուրիշի մը տուած եմ:

— Օ՛հ, Տիկին, կը պատասխանէ մեր
ծերունի, ձեզ ո՞վ ըսաւ թէ ես այդքան
բարձրերուն աչք ունիմ:

×

Ամլութիւնը՝ ամուսնութեան ֆիլօսո-
փան է:

×

Սէրը նկարիչ մ'է որ սիրուած անձին
պատկերը կը գեղեցկացնէ:

Յ. Ա.

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՍ-ԳԻՒԴ. — Տեղւոյս վարժարանին օգնական ուսուցիչը փայլելով փայլեցաւ անցեալ կիրաճի Զիլիֆտար, չիֆթի ֆառէկ սանտալին մէջ, չիֆթ թէլի նուագող նաղարաճիները դէմն առած, և այնպիսի վիճակի մը մէջ, որուն ի տես կարելի չէր չզուլիլ: Պըռավօ միւսիւր... ու ըսել թէ դուք ալ պզտիկներուն բարոյականին մենտորն էք հէ՞... Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Հոս կարգ մը օրերդներ չենք գիտեր ուր տեղի սովորոյթը կապկեղով եկեղեցւոյ մէջ ձեռքերնին կռնակնին դրած կը կենան, ի մեծ լկտիութիւն և ի մեծ ամօթ իրենց զարգացեալ համբաւին ու քաղաքակրթութեան: (Մայեօ մըն ալ հագէք հոգ չէ, և թուրքերին վրայ ելէք խուչիկներս... չըլլա՞ր. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Հոս Պէյլէրի պարտէզը իր ներկայ նախանձելի վիճակին հասցնող Միհրան էֆէնտին նկատելով որ կարգ մը անաթոններ ֆօսֆով պատկեր քաշելու ջերմ փափաք մը ունին, մասնաւորապէս խնդրուած է Պատ. Ժողովուրդէն որպէս զի իրենց է՛ն պահեստի քօսթիւմներով հրամմեն շապիկ մ'ալ գեղեցիկ քաշուելու համար: (Շատ կաղաչենք որ այդ ալպօմը թերթիս յատկացուի բաժանորդաց նուէր տալու համար. Ծ. Խ.):

ՀԻՒԱՆԴԱՆՈՅ. — Խօսողընէն շաբաթը տասը շրուշով ձեռք մը պիտի քօսթիւմ կռնակը անցնող եապանի խմբագիր մը սեղանէն մերժուելուն

համար կըսուի թէ այդ նոր քօսթիւմը սեւ պոյայի պիտի տայ ի նշան սուգի: (Կարծեմ թէ բամբասանք չէ, բանն ասանկ է. Ծ. Խ.):

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ ՀԱՅՈՒՆԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՏԱԲԱԶԱՐ

Երեքշաբթի 12/25 Յունիս 1907, Ատաբազարի Հայուհեաց վարժարանին մէջ տեղի ունեցաւ չըջանաւարտուհեաց հանդէսը:

Այս տարուան չըջանաւարտ օրիորդներն են հետեւեալները.

Օրք. Աղաւնի Յ. Գայրգճեան (Կ. Պոլիս).
Արմենուհի Ս. Կալաճիկեան (Կ. Պոլիս).
Արմենուհի Մ. Ճրկայեան (Ատաբազար).
Արուսեակ Կ. Աղպապեան (Տարսոն).
Բերուզ Յ. Անդրէասեան (Կ. Պոլիս).
Գալինիկ Ս. Թիմուրեան (Կ. Պոլիս).
Եւնիկէ Ս. Գուրուհան (Ա. Պոլիս).
Թարիա Յ. Պէրպէրեան (Պարտիզակ).
Կիւլէնիա Մ. Մոմճեան (Մարաշ).
Հայկանոյշ Կ. Թաթարեան (Ա. Պոլիս).
Հռիփսիմէ Մ. Աթանասեան (Պարտիզակ).
Հրանոյշ Ռ. Շաքարագործեան (Պարտիզակ).
Հրանոյշ Ն. Պոռաղանճեան (Վառնա).
Վիքթորիա Կ. Պողոսեան (Նիկոմիդիա).
Քնարիկ Ղ. Միսքճեան (Ատաբազար).
Ֆլորա Ս. Գասպարեան (Ատաբազար).

Ատաբազարի աղջկանց տիպար այս վարժարանը իր մշտնջենական և բարեօրէն ընթացքով արդէն անուն ու համբաւ մը չինած է թէ Մայրաքաղաքի և թէ Գաւառներու մէջ:

Խմբագրութիւնս կը շնորհաւորէ սոյն վարժարանի ժրջան աշխատողներն և ալ աւելի ցայտուն յաջողութիւններ կը մաղթէ ապագային:

Արսօմսկր ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԴՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ


ԼԱՆՆՈՅԲՁՆԱԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԼՏԻՆԱՍԵ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հաւաւ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ և գիներու անմըցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գլխաւ յաճախորդաց վատահոլութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորակներու
և տղայոց շիք և գլխացկունք ֆուրս-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Օակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—39



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՊՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեպար պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Չիկասսանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն գոյաւորահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԵՆՔ ԹԷ
ՄԵՐ հրատարակութիւններէն

ՓՆՋԱԿ

Գ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
ԵՒ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆՋ

Անուն օգտաշատ դասագիրքերը
ՆՈՐԷՆ ՏՊՈՒԵՑԱՆ

և կը վաճառուին սովորական գիներով
եւ թէ՛

Համառօտ Իրագիտութիւնն ալ

նորէն պիտի լոյս տեսնէ՝

Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած

Դիմել 47, Պապը-Ալի հասցեի

ՍՄԱՍՏ ԳՍԻԹԵԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիզի 14 և 18 աստիճան ոսկեոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաև անուէններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագոգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիկացի, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացորի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի ձօնս. Նովման՝ և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաց տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժանութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅՈՒ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50 — 28:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեռքէ վաճառում՝ քաղք փարս: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանոօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խրանամալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօքումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և հրքեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ նօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսալիսութիւն մը կը կազմեն: